Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

**Պ-249-25.09.2019-ՊԻ-011**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի 161-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

3. Յուրաքանչյուր խմբակցություն կարող է ունենալ Աշխատակազմի հաստիքացուցակով սահմանված մեկ գործավար և հինգ փորձագետ:

**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երրորդ օրը:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 161. Խմբակցությունների գործունեության ապահովումը**

1. Աշխատակազմն Ազգային ժողովի նստավայրում խմբակցություններին ապահովում է նրանց աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ միջոցներով:

2. Խմբակցության գործունեության մասնագիտական սպասարկումն իրականացնում են խմբակցության գործավարը և փորձագետները, որոնք աշխատանքի են ընդունվում ժամկետային պայմանագրով` համապատասխան խմբակցության ղեկավարի ներկայացմամբ, կատարում են նրա հանձնարարությունները, ինչպես նաև նրա հանձնարարությամբ աջակցում են խմբակցության աշխատանքին:

3. ~~Մինչեւ 14 անդամ ունեցող խմբակցություններն ունենում են Աշխատակազմի հաստիքացուցակով սահմանված մեկ գործավար եւ մինչեւ երեք փորձագետ, իսկ 14-ից ավելի անդամ ունեցողները` մեկ գործավար եւ մինչեւ հինգ փորձագետ:»~~

Յուրաքանչյուր խմբակցություն կարող է ունենալ Աշխատակազմի հաստիքացուցակով սահմանված մեկ գործավար և հինգ փորձագետ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

| ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ | | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ |
|---|---|---|---|---|
| Պատգամավորներ<br><br>Արման Աբովյան, Գևորգ Պետրոսյան | Հոդված 1 | Յուրաքանչյուր խմբակցություն կարող է ունենալ Աշխատակազմի հաստիքացուցակով սահմանված մեկ գործավար և հինգ փորձագետ: | Ընդունվել է | Ընդունվել է |
| | | | | |